



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ  
«ԲԱՐՁՐԱՎՈՐԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«10» 03 2017թ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

### ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ

ԲՓ 23

ԶԵՆՈՆԱՐԿՈՂՈՅԻ

«Նարվաննա» ՍՊԸ

Ք. Արմավիրի, Սահմանապահերի 46, բն. 40

Գործունեությունը՝

Երվանդաշաղի բազալտի երևակման գարածքի  
երկրաբանական ուսումնասիրության շրջակա  
միջավայրի վրա ազդեցության նախնական  
գնահատման հայտ

«Արմավիրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝

Վ. Սահակյան



Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՍՈՒԹՅԱՆ**

թիվ ԲՓ 23

«10 » 03 2017թ.

**ՀՀ Արմավիրի մարզի Երվանդաշատի բազալտի երևակման տարածքի  
երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նախնական  
գնահատման հայտ**

Պատվիրատու՝	«Նարվաննա» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Ծրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Գ»
Տեղադրման վայրը՝	ՀՀ Արմավիրի մարզ

Երվանդաշատի բազալտների երևակումը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզում, Արմավիր քաղաքից 20 կմ արևմուտք: Այն տեղադրված է Երվանդաշատ գյուղից 10 կմ դեպի արևելք 900-1200մ բացարձակ նիշերի վրա: ՀՀ Արմավիրի մարզի Երվանդաշատի բազալտի երևակման տարածքում նախատեսվում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ՝ երևակման ընդհանուր 6.0հա մակերեսով տարածքում:

Երվանդաշատի բազալտների երևակման և նրա հարակից տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են երկու կոմպլեքսի ապարներ՝ ստորին (միոցենի) և վերին (պլիոցեն-չորրորդական), որոնք կտրուկ տարբերվում են իրարից ինչպես պետրոգրաֆիական կազմով, այնպես էլ առաջացման պայմաններով, տեղադրմամբ ու մետամորֆիզմի աստիճանով:

Ծրջանի կիման չոր է, ցամաքային, խիստ ծմեռով և տաք ամունով: Օդի ջերմաստիճանը ամռանը հասնում է  $+40^{\circ}\text{C}$ -ի, իսկ ձմռանը մինչև  $-20-25^{\circ}\text{C}$ : Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է  $+6^{\circ}\text{C}$ -ից մինչև  $+15^{\circ}\text{C}$ : Տեղումների տարեկան միջին քանակը 300մմ է:

«Նարվաննա» ՍՊ ընկերությունը Երվանդաշատի բազալտի երևակման երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները նախատեսում է իրականացնել հետևյալ մեթոդաբանությամբ՝

- տեղամասի 1:1000 մասշտարի երկրաբանական քարտեզի կազմման համար նախատեսվում է կատարել տեղամասի 1:1000 մասշտարի տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ,
- 10կմ որոնողական երթուղիների անցում,
- 6 հորատացնքերի հորատում՝ մինչև 60մ ընդհանուր խորությամբ,
- սյունակային եղանակով օգտակար հաստվածքի ամբողջ հզորությամբ նմուշարկման իրականացում,
- փորձնական հանույթի իրականացում,
- լաբորատոր ուսումնասիրությունների իրականացում:

Ուսումնասիրվող տարածքում բազալտների հեռանկարայնության գնահատման համար կատարվելու է 1:1000 մասշտարի երկրաբանահանույթային աշխատանքները: Երկրաբանական



քարտեզ կազմելու համար նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական՝ հետախուզական փորվածքների և նմուշարկման տեղերի, ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ և բոլոր փորվածքների մարկեյդերական սպասարկում ամբողջ աշխատանքների տևողության ընթացքում: Նախատեսվում է հետախուզվող տարածքի վրա ստեղծել 1-ին և 2-րդ կարգի տրանզույցիոն ցանց: Տոպոմակեյդերական աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով:

Որոնողահետախուզական աշխատանքների համար եզրագծված տեղամասում նախատեսվում է կատարել 1:1000 մասշտարի որոնողական երթուղիներ՝ դաշտի երկրաբանական կառուցվածքի և երկրաբանական սահմանների ճշտմամբ: Նախատեսվում է կատարել 10կմ որոնողական երթուղի:

Հետախուզվող տեղամասում բազալտները խորքում հետախուզելու նպատակով նախատեսվում է հորատել հորատանցքեր մինչև 10մ խորությամբ:

Հորատման աշխատանքները կիրականացվեն այդ նպատակով մասնագիտացված մասնավոր կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Այդ աշխատանքներով պետք է ապահովվի օգտակար մարմնի համապատասխան տիրույթից նվազագույնս 90% հորատահանումի ելք:

Հորատումն իրականացվելու է ինքնաշարժ հորատող հաստոցներով՝ 132-ից 112մմ տրամագծի կարծր համածովվածքի թագիկներով: Ընդամենը նախատեսվում է հորատել միջինը 10մ խորությամբ թվով 6 հրատանցքեր:

Նախագծով նախատեսվում է հորատել 6 հրատանցք, որի համար 6 անգամ կկատարվի հորատող հաստոցի տեղակայում և ապատեղակայում:

Նախատեսվում է իրականացնել հետախուզական հորատանցքերի կապակցում, հորատահանումի փաստագրում և նկարագրում: Կատարվելու է նմուշների վերցնում, դրանց պիտակավորում և փաթեթավորում նմուշարկման միջակայքերի նշմամբ: Տեղամասի տոպոհիմքի վրա կնշվեն հորատանցքերի տեղերը, որոնք կգրանցվեն համապատասխան մատյանում: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտարով:

Օգտակար հանածոյի որակական, ֆիզիկամեխանիկական, քիմիական և պետրոգրաֆիական հատկությունների որոշման նպատակով բոլոր հորատանցքերը կենթարկվեն հանուկային մենակտորային նմուշարկման:

Հորատանցքերը կենթարկվեն համատարած և կետային (ընդհատվող տիրույթներով) նմուշարկվող առավելագույնը 2մ երկարությամբ հանուկային նմուշներով:

Ապարի քիմիական և պետրոգրաֆիական հատկությունների որոշման համար կվերցվեն համապատասխան քանակությամբ հանքակտորներ: Ընդամենը նախատեսվում է վերցնել 20 հանուկային և 3-ական քիմիական և պետրոգրաֆիական հետազոտությունների համար նմուշ:

Լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի տոկոսի որոշման համար նախատեսվում է փորձնական բացահանքերի բացում  $25 \times 5 \times 4$  չափերով ( $500\text{m}^3$  ծավալով), որից  $150\text{m}^3$  դեյուվիալ առաջացումներ, օգտակար հանածոյի փշրված ապարներ և  $350\text{m}^3$  թարմ ապարներ:

Նախատեսվում է 20 նմուշների ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրություն և 3-ական նմուշների քիմիական ու պետրոգրաֆիական ուսումնասիրություն:

Կկատարվի ամբողջ փաստացի նյութի ընդհանրացումը և համակարգումը, երկրաբանական հաշվետվության կազմում իր համապատասխան ներդիր քարտեզներով, հատակագծերով, կտրվածքներով և պաշարների գնահատմամբ:

Հորատման ժամանակ կօգտագործվեն նախկինում կառուցված ճանապարհները՝ որանք նորոգելով:

Նախատեսվում է 6 հորատման հարթակների և դրանց մոտեցման ճանապարհների կառուցում մեխանիկական եղանակով՝ 4-րդ կարգի ապարներում:

Այդ աշխատանքների ծավալները ստորաբաժանվում են՝ 6 հորատման հարթակ: Մեկ հորատման հրապարակի մակերեսը կկազմի՝ 48մ<sup>2</sup>: Ընդհանուր մակերեսը կկազմի 248,0 մ<sup>2</sup> Վերականգնման ենթակա հողաշերտի ծավալը կկազմի՝ 49,6մ<sup>2</sup>: Ծրագրով նախատեսվում է նորոգել 0.5կմ ճանապարհ՝ 4մ լայնությամբ և 0.2մ խորությամբ՝ 400մ<sup>3</sup> ծավալով:

Հետախուզվող տարածքում ինժեներակրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների /ջրաբեր հորիզոնների առկայությունը պարզելու համար/ պարզաբանման նպատակով նախատեսվում են կատարել համապատասխան դիտարկումներ:

Ինժեներակրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել հանքավայրի ապարների զանգվածների առանձնահատկությունները, դրանց անհզուրոպիան, ապարների կազմը, դրանց ճեղքավորվածությունը, ապարների կազմվածքային յուրահատկությունները և այլն:

Անցած լեռնային փորվածքները, հանուկը պետք է ենթարկվեն ռադիոմետրական չափումների, ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար:

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Տարածքի ուսումնասիրության ընթացքում շրջակա միջավայրը աղլոտվածությունից գերծ պահելու նպատակով անհրաժեշտ է օգտագործվող տեխնիկան շահագործել սարքին վիճակում՝ վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու համար:

Աշխատանքների տարածքը բուսականությունից զուրկ թեք լեռնային տարածք է:

Տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են հորատանցքների հորատմամբ, մակերեսային լեռնային փորվածքների, հետախուզաառուների և հետախուզահորերի անցմամբ:

Այդ աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրը աղլոտվածությունից գերծ պահելու նպատակով նախատեսվում է կիրառել բնապահպանական հետևյալ միջոցառումները.

- պարերաբար հսկել մթնոլորտային օդի մաքրությունը հորատման հրապարակներում, ավտոճանապարհների վրա, նկատի ունենալով, որ օդում փոշու սանիտարական նորման չպետք է գերազանցի 0.004գ փոշի օդի 1մ<sup>3</sup>-ում,

- փոշեզրկման նպատակով աշխատանքային գոտիներում պարերաբար կատարել ջրցանում,

- օգտագործվող ագրեգատներն աշխատեցնել սարքին վիճակում վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու համար:

Ինչպես նաև հորատող մեքենայի աշխատանքի ժամանակ նախատեսվում է վնասակար նյութերի արտանետումների քանակը փոքրացնելու համար սարքավորումների վրա վտանգավոր նյութերի չեղքացուցիչների տեղադրում: Ինչպես նաև հետևել, որպեսզի մեխանիզմի աշխատանքի ժամանակ վառելիքի և քայլուելի արտահոսք տեղի չունենա:

Նախատեսվում է որպես հորատման սպասարկող ճանապարհներ օգտագործել գոյություն ունեցող գրունտային ճանապարհները՝ վերջիններս բարեկարգելով:

Զրային ավազանի կեղտոտում տեղի չի ունենա, քանի որ ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով ծրագրով նախատեսվում է հորատահարթակների կառուցման ժամանակ հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով, ծածկել հողաշերտով՝ բաց թողնելով հանքային մարմնի տեղամասերը խրամներում:



ՈԵԿՈՎՏԻՎԱԳԻԱՅԻ ԵՆԹԱԿԱ ԻՒՂԵՐԻ ԾԱՎԱԼՐ ԻԱՇՎԱՐԿՎՈՄ Է ԻՒՐԱՏԱՀԱՐԹԱԿՆԵՐԻ ՏԱՐԱՁՔԻ ՄԱԿԵՐԵՍԻՑ: Հողաբուսածածկի շերտը վերականգնվում է 0.2մ խորության վրա: Վերականգնման ենթակա փորվածքների ընդհանուր մակերեսը կազմում է 248մ<sup>2</sup>: Վերականգնման ծավալը կկազմի 49.6մ<sup>3</sup>:

Վերականգնումը իրականացվելու է ձեռքով III կարգի գրունտներով: ՈԵԿՈՎՏԻՎԱԳԻԱՅԻ համար նախատեսվող գումարը կկազմի՝ 30000դրամ:

## ԵԶՐԱՉԱՆԳՈՒՄ

Այսպիսով Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են << բնապահպահականության նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում նախագիծը լրամշակվել է և հաշվի է առնվել արված դիտողություններն ու առաջարկությունները:

## ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է << օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտի փաստաթղթերում ամրագրված բնապահպանական միջոցառումների և սոցալ-տնտեսական ծրագրի պահանջներին, իսկ դրանց չբավարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:
3. Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում առաջացած շինարի (կենցաղային աղբի), հեռացումն անհրաժեշտ է իրականացնել << օրենսդրությամբ սահմանված կարգով:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Նարվաննա>> ՍՊԸ կողմից ներկայացված << Արմավիրի մարզի Երվանդաշատի բազալտի Երևակման տարածքի Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետն՝



Զ. Զուրնաշյան